Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 324 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանին խաղահրապարակի նվիրաբերում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Հրանտ Վարդանյան փողոց 6, ՀՎՀՀ՝ 02269952)
4.	Ծրագիրը կատարողը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Հրանտ Վարդանյան փողոց 6, ՀՎՀՀ՝ 02269952)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ, Մասիս համայնք, բնագավառը՝ համայնքային զարգացում
6.	Ծրագրի բյուջեն	4,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Մասիսի համայնքապետարան (հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ, Մասիս համայնք, քաղաք Մասիս, Կենտրոնական հրապարակ, թիվ 4)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի մայիսի 10-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 1-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել խաղահրապարակ՝ խաղային համալիր, պտուտակ, ճոճանակ, ճոճորաններ և հավասարակշիռ, իրականացնել դրանց տեղադրման աշխատանքները Մասիսի համայնքապետարանի դիմաց գտնվող այգում ու նվիրաբերել Մասիսի համայնքապետարանին. 2) միջոցառման արժեքը կազմում է 4,000,000 դրամ. 3) միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2024 թվականի մայիսի 10-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Նախատեսվում է ձեռք բերել խաղահրապարակ՝ խաղային համալիր, պտուտակ, ճոճանակ, ճոճորաններ և հավասարակշիռ, ու կազմակերպել դրանց տեղադրման աշխատանքները՝ 4,000,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Մասիսի համայնքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	1) ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրակա-նացվելու է «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի հոգաբար-ձուների խորհրդի կողմից. 2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկություն-ների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

07.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ